ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
https://orcid.org/0000- 0002-3019-4075

ՄԱՐԻԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Արցախի պետական համալսարանի դասախոս,
ՀՊՏՀ ասպիրանտ
https://orcid.org/0000-0003-1379-4500

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Արցախի Հանրապետության տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, որը սննդի արդյունաբերության հետ միասին ձևավորում է ագրոպարենային համակարգը: Մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը ագրոպարենային համակարգն աչքի էր ընկնում զարգացման բարձր տեմպերով և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման արդիական գործելաոճով:

Սույն հոդվածում գնահատվում է ԱՀ ագրոպարենային համակարգի կորուստները, բացահայտվում են նոր ի հայտ եկած հիմնախնդիրները, ներկայացվում դրանց լուծման առաջարկություններ: Մասնավորապես՝ շեշտադրվում են նորամուծական տեխնոլոգիաներով սահմանափակ արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման և երկրի պարենային անկախության ապահովման հնարավորությունները: Հատկապես կարևորվում է գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման, ագրովերամշակող ոլորտի հետ ինտեգրման և կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը:

Հիմնաբառեր. *Արցախ, գյուղատնտեսություն, պատերազմ, կորուստներ, հողօգտագործում, պետական աջակցություն, ծրագրեր*

JEL: Q10, Q20
DOI: 10.52174/1829-0280_2022.3-95

Ներածություն: Մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը Արցախի Հանրապետությունը ոչ միայն դիմակայում էր Ադրբեջանի կողմից պաշտպանության բանակի ուղղությամբ պարբերաբար կրկնվող կրակոցներին ու զանգվածային հարձակում սկսելու սպառնալիքին, այլև հաստատակամորեն ամրապնդում էր պետականության հիմքերը, զարգացնում երկրի կառավարման, պաշտպանական, տնտեսական ու սոցիալական ոլորտները: Արցախը, օգտվելով կրակի դադարեցման մասին 1994 թ. համաձայնագրից, Հայաստանի Հանրապետության և հայկական սփյուռքի բազմակողմանի աջակցությամբ ունեցավ տնտեսական ու սոցիալական վիճակի նկատելի բարելավում: Բավական է նշել, որ միայն երկու տասնամյակում (2000–2019 թթ.) բնակչությունն ավելացավ 14,4, իսկ զբաղվածների թիվը՝ 14,1 հազ. մարդով: Նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ն ավելացավ 14,8, արդյունաբերական արտադրանքը՝ մոտ 34, գյուղատնտեսական արտադրանքը՝ 5,2, շինարարության ծավալը՝ 8,7, առևտրի մանրածախ շրջանառությունը՝ 7,5, ծառայությունների ծավալը՝ 33,6, վարկային ներդրումները՝ 122, արտաքին ապրանքաշրջանառությունը՝ 2,16, այդ թվում արտահանումը՝ 9,3 անգամ[1]:

Արցախի գեղատեսիլ բնությունը, բնական ու պատմական հուշարձանները, բնակչության առանձնահատուկ կենցաղն ու անկրկնելի խոհանոցը նպաստում էին զբոսաշրջության զարգացմանը: Շուշիում, Գանձասարում, Ամարասում, Տիգրանաշենում և Ստեփանակերտում պատմական հուշարձանների վերականգնումը և նոր մշակութային ու հանգստի օբյեկտների գործարկումը զբոսաշրջիկների շրջանում մեծ հետաքրքրություն էր առաջացրել:

Ի թիվս մյուս ճյուղերի, զարգացման նոր հնարավորություններ էր ստացել նաև գյուղատնտեսությունը, որի հիմքի վրա ավելացել էին ագրովերամշակման հզորությունները, բազմազանեցվել է արտադրվող սննդամթերքի տեսականին: Արցախյան բրենդ համարվող թթի օղին, թթի չիրն ու դոշաբը, «Խնդողնի» խաղողի գինին ու ժինգյալով հացը արտահանվում էին Հայաստան և աշխարհի այլ հայաբնակ երկրներ: Սակայն այս խաղաղ ու բնականոն զարգացումը խաթարվեց Ադրբեջանի նախաձեռնած պատերազմով, որի ընթացքում թուրքական ժամանակակից սպառազինության կիրառման և բարձրաստիճան թուրք զինվորականների շտաբային կառավարման ու վարձկան ահաբեկիչների ներգրավման միջոցով 44-օրյա մարտերից հետո 2020 թ. նոյեմբերի 9-ին ՌԴ միջնորդությամբ Մոսկվայում ընդունվեց ռազմական գործողությունների դադարեցման հայտարարություն:

Համաշխարհային փորձը բազմիցս ապացուցել է, որ հետպատերազմյան բարեփոխումների հաջողությունն ու ձախողումը միշտ պայմանավորված են երկրի կամային հատկանիշների՝ արտաքին օգնության նպատակային օգտագործմամբ: Աշխարհում անընդհատ աճող պարենային հիմնախնդրի պայմաններում ԱՀ-ն պարզապես պարտավոր է որակական ագրարային բարեփոխում իրականացնել ագրոարդյունաբերական համալիրի արդյունավետությունը արմատապես բարձրացնելու համար:

Սույն հետազոտության նպատակն է գնահատել Արցախի Հանրապետության ագրոպարենային համակարգի կորուստները, բացահայտել հետպա-

[1] Հաշվարկները կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգրքերի (մինչև 2016 թ.) և Արցախի վիճակագրական տարեգրքերի (2017–2020 թթ.) տվյալների հիման վրա:

տերազմյան հիմնախնդիրները և ներկայացնել դրանց լուծման առաջարկություններ:

Գրականության ակնարկ: Ագրոպարենային համակարգը երկրի տնտեսական զարգացման առանցքային ոլորտներից մեկն է, որի տնտեսական, կառավարման, կազմակերպման և տեխնիկական խնդիրները բազմակողմանիորեն ուսումնասիրվել են: Որպես կանոն, տնտեսագիտական գրականության մեջ այս ոլորտը դիտարկվում է ավելի լայն, օրինակ՝ ագրոարդյունաբերական համալիրի (ԱԱՀ) ընդգրկմամբ: Եթե ագրոպարենային համալիրը ներառում է գյուղատնտեսության և գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտները, ապա ԱԱՀ-ն, դրանց հետ մեկտեղ, ընդգրկում է անհրաժեշտ արտադրության միջոցների արտադրությունը, իսկ որոշ հեղինակների կարծիքով՝ նաև նյութատեխնիկական սպասարկման և արտադրանքի իրացման ենթակառուցվածքները:

Արցախի ագրոպարենային համալիրի զարգացման հարցերին նվիրված հետազոտությունները հիմնականում վերաբերում են բուսաբուծության և անասնաբուծության, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտներին: Արցախի Հանրապետության տնտեսության թերևս առավել ընդգրկուն հետազոտություն իրականացվել է ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի ղեկավարած խմբի կողմից, որի արդյունքները 2011 թ. փետրվարին ներկայացվել են Կառավարությանը[2]: Այդ խմբի աշխատանքներին մասնակցել է նաև սույն հոդվածի հեղինակներից մեկը:

Ի պատիվ Արցախի իշխանությունների՝ պետք է նշել, որ այդ խմբի առաջարկությունների զգալի մասը հաջողությամբ կյանքի կոչվեց, որը մինչև երկրորդ պատերազմը ապահովեց ագրոպարենային ոլորտի դինամիկ զարգացումը: Առանձնահատուկ կարելի է ընդգծել գյուղատնտեսության կառուցվածքի բարելավման, բանջարաբոստանային արտադրանքով ինքնաբավության մակարդակի բարձրացման, ջերմատնային տնտեսության զարգացման և գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման նկատմամբ աննախադեպ ուշադրությունը:

ԱՀ գյուղատնտեսության, մասնավորապես՝ այգեգործության, խաղողագործության և գինեգործության զարգացման պետական աջակցության ծրագրերի վերլուծությանն է վերաբերում Ա. Բեգլարյանի «Արցախի գյուղատնտեսությունը. մաքառումների միջոցով ինքնաբավություն» հրապարակումը, որտեղ հեղինակը կարևորում է հատկապես նոր հիմնադրված նռան այգիների ու գինեգործության զարգացման ծրագրերը[3]:

Պատերազմից հետո Արցախի տնտեսության վիճակի և զարգացման հնարավորությունների առավել ընդարձակ վերլուծություն է կատարել Ա. Բարսեղյանը «Լեռնային Ղարաբաղի տնտեսություն. ռազմական հակամարտության արդյունքները, Արցախի Հանրապետության վերականգնում և զարգացում» հոդվածում[4]: Ինչպես իրավացիորեն նշում է հոդվածի հեղինակը,

---

[2] Տե՛ս http://theanalyticon.com/?p=607

[3] Տե՛ս https://noev-kovcheg.ru/mag/2017-12/6015.html

[4] Տե՛ս **Барсегян А. А.**, Экономика Нагорного Карабаха: результаты военного конфликта, востановление и развитие экономики Республики Арцах, Инновации в науке, обществе, образовании:факторы и механизмы устойчивого развития /монография/. Пенза, «Наука и просвещение», 2021, էջ 101-116:

հատկապես պատերազմից հետո Արցախի ինքնահաստատման և սոցիալ-տնտեսական զարգացման օբյեկտիվ դժվարությունները կապված են հիմնականում միջազգային մակարդակով Արցախի Հանրապետության չճանաչման և չլուծված հակամարտության հետ: Այս անորոշությունների պայմաններում հատկապես ՀՀ և հայկական սփյուռքի օգնությամբ ձեռնարկվում են միջոցառումներ տնտեսության վերականգման, բնակարանաշինության ծրագրերի իրականացման և տուժած ֆիզիկական ու իրավաբանական անձանց աջակցության ուղղությամբ: Արցախի Հանրապետության տնտեսության, այդ թվում՝ գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները լուսաբանվել են Ե. Հայրիյանի «Արցախի Հանրապետության տնտեսության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները»[5] և այլ հոդվածներում[6], Լ. Բարսեղյանի և Ա. Ծատուրյանի «Ասկերանի շրջանի սոցիալ-տնտեսական վերլուծությունը»[7] հոդվածում առավելապես շեշտադրվել են Ասկերանի շրջանի գյուղատնտեսության զարգացման հիմնահարցերը, օբյեկտիվորեն նշվել է տնտեսության բազմազանեցման ու նորարարության կարևորությունը: Սույն հոդվածում քննարկվող խնդիրներին առավել մոտ են Ս. Ավետիսյանի «Արցախի Հանրապետության ագրարային ոլորտի զարգացման հետպատերազմյան հիմնախնդիրները»[8] և Ա. Փախլյանի «Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ...»[9] հրապարակումները, որտեղ հեղինակները պատերազմի պատճառով տնտեսության կորուստները գնահատելուց զատ ներկայացնում են հետպատերազմյան վերականգնման ու զարգացման որոշակի տեսակետներ:

Արցախյան երկրորդ պատերազմի քաղաքական և տնտեսական հետևանքներին անդրադարձել են նաև արտերկրի, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության գիտնականները: Այսպես՝ արցախյան երկրորդ պատերազմին և դրա հետևանքներին առնչվող հարցերը 2021 թվականի հունվարի 14-ին քննարկման առարկա դարձան Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում: Քննարկման մասնակիցներ Ա. Յու. Սկակովի և Վ. Մ. Մուխանովի «Լեռնային Ղարաբաղ - 2020: Պատերազմի հետևանքները և հետպատերազմյան կարգավորման հեռանկարները» հոդվածում բավականին մանրամասն անդրադարձ է կատարվում Արցախի քաղաքական և տնտեսական վիճակին[10]: Այդուհանդերձ, հեղինակները խուսափել են Արցախի Հանրապետության անկախությանն ու տնտեսական նվաճումներին օբյեկտիվ գնահատական տալուց՝ տուրք տալով երկակի մո-

---

[5] Տե՛ս Գիտական Արցախ, N 1, 2021, էջ 181-186:

[6] Տե՛ս https://artsakhlib.am/category/%D5%B0%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80/?author=%D4%B5%D5%BE%D5%A3%D5%A5%D5%B6%D5%B5%D5%A1+%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%AB%D5%B5%D5%A1%D5%B6

[7] Տե՛ս «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, 2018, էջ 213-218:

[8] Տե՛ս **Аветисян С.,** Послевоенные проблемы развития аграрного сектора Республики Арцах, «Амберд» бюллетень, N 5, 2021, էջ 18-23:

[9] Տե՛ս https://asue.am/upload/files/amberd/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%206.pdf

[10] Տե՛ս **Муханов В., Скаков А.,** Нагорный Карабах, 2020: последствия войны и перспективы поствоенного урегулирования // Мировая экономика и международные отношения, том 65, выпуск №6, 2021, էջ 128-138, http://ras.jes.su/meimo/s013122270015699-9-1, DOI: 10.20542/0131-2227-2021-65-6-128-138

տեցման տխրահռչակ ավանդույթին, միանշանակ չվերաբերվելով դեռևս չճանաչված Արցախի քաղաքական ու տնտեսական անկախության հեռանկարին: Իսկ Ադրբեջանի գիտնականներն իրենց հրապարակումներում խիստ չափազանցված ներկայացնելով Լեռնային Ղարաբաղին և, այսպես կոչված, Արևելյան Զանգեզուրին հայկական կողմի հասցրած վնասները՝ քննարկում են նախագահ Ի. Ալիևի ղեկավարությամբ նավթային գումարներով, Թուրքիայի և մյուս բարեկամ երկրների աջակցությամբ վերականգման հեքիաթային ծրագրեր: Այսպես՝ Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Տ. Ալիևը գրում է. «Այսօր օկուպացիայից ազատագրված Ադրբեջանի հողերի վրա ինտենսիվ և համակարգված կառուցվում են օդանավակայաններ, ճանապարհների և երկաթուղիների լայն ցանց, «խելացի քաղաքներ» և «խելացի գյուղեր», ինչպես նաև մշակվում են գյուղատնտեսական հողերը: Տարածաշրջանում իրականացված առաջին խոշոր ծրագրերը եղել են Ահմեդբեյլի-Ֆիզուլի-Շուշա երթուղու 101 կմ երկարությամբ ճանապարհը և Ֆուզուլիի միջազգային օդանավակայանը: Զանգիլանի և Լաչինի շրջաններում դրվել են ևս երկու միջազգային օդանավակայանների հիմքերը»[11]: Խիստ միակողմանի գնահատելով պատերազմի հետևանքով կորուստները և անտեսելով հատկապես «Հայաստան» հիմնադրամի միջոցով իրականացված ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը՝ ադրբեջանական կողմը շեշտադրում է, որ իրենց կողմից իրականացվելիք ծրագրերը նաև հօգուտ Հայաստանի են:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ, Արցախի անորոշ կարգավիճակի, վիճակագրական տվյալների պակասի և դժվար հասանելիության պատճառով թեմային առնչվող տնտեսագիտական հետազոտություններն ու գիտական հրապարակումները, թերևս, խիստ սահմանափակ են և համարժեք չեն ադրբեջանական կողմի լայնածավալ քարոզչությանը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար որպես վիճակագրական աղբյուր ծառայել են Արցախի Հանրապետության (ԱՀ) վիճակագրական ծառայության հրապարակումները, ինչպես նաև ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, գյուղատնտեսության նախարարության, կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի, ջրային կոմիտեի և գյուղատնտեսության պետական աջակցության հիմնադրամի պաշտոնական կայքերի համապատասխան տվյալները:

Հոդվածի թեմայի առանձնահատկությունների թելադրանքով որպես ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմք ընդունվել են հայրենական և օտարերկրյա գիտնականների աշխատությունները: Մեթոդաբանության առանցքը կազմել է հետազոտության դիալեկտիկական մեթոդը, որը երևույթները դիտարկում է ոչ թե միմյանցից մեկուսացված, այլ որպես ամբողջություն, շարունակական շարժման ու փոփոխության, նորացման ու զարգացման վիճակում: Այս սկզբունքով են ներկայացված ԱՀ ագրոպարե-

---

[11] Տե՛ս **Алиев Т. Н.**, Восстановление экономики Карабаха и Восточного Зангезура на основе концепций устойчивого и инклюзивного развития, https://cyberleninka.ru/article/n/vosstanovlenie-ekonomiki-karabaha-i-vostochnogo-zangezura-na-osnove-kotseptsiy-ustoychivogo-i-inklyuzivnogo-razvitiya

նային համալիրի նախապատերազմյան զարգացման և հետպատերազմյան վերականգման հիմնական ծրագրերը:

Բացի այդ, տնտեսական երևույթների մեկնաբանման համար օգտագործվել են համեմատական, վերլուծության, փորձարարական, վիճակագրական, գրաֆիկական և մենագրական մեթոդները: Այս մեթոդների օգնությամբ բացահայտվել է Արցախի Հանրապետության ագրոպարենային ոլորտի հետպատերազմական վիճակը, շեշտադրվել են առավել խոցելի խնդիրները, ուսումնասիրվել են հողատարածությունների, գյուղատնտեսական կենդանիների անասնագլխաքանակի, ոռոգման համակարգի և գյուղատնտեսական տեխնիկայի կորուստները, վերլուծվել են գյուղատնտեսական ճյուղերի արտադրատնտեսական ցուցանիշները, կատարվել են գիտական ընդհանրացումներ, մշակվել՝ առաջարկություններ: Առանձին հարցերի առավել խոր վերլուծության նպատակով օգտագործվել է մենագրական մեթոդը, որի կիրառմամբ դիտարկվել են հողային պաշարներին, մեքենատրակտորային հավաքակազմի հզորությանը և անասնագլխաքանակի շարժընթացին վերաբերող խնդիրները:

Հոդվածում հիմնականում կիրառվել են փորձառական հետազոտության սկզբունքները: Այսինքն՝ երևույթների ուսումնասիրությունը և վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանական հաջորդականությամբ. նախ բացահայտվել է երևույթի հետազոտության անհրաժեշտությունը և արդյունքների կարևորությունը, երկրորդ՝ ընտրվել են հիմնական բնութագրիչ ցուցանիշները և փոփոխականները, երրորդ՝ առավել ամբողջական ընկալման և վերլուծության համար կատարվել են համեմատություններ ու հետևություններ:

Վերլուծություն: «Միջազգային ճգնաժամային խմբի» (INTERNATIONAL CRISIS GROUP) փորձագետները 2019 թվականի «Լեռնային Ղարաբաղում ինչպե՞ս դուրս գալ փակուղուց» զեկույցում, վկայակոչելով ՀՀ և ԱՀ վիճակագրական ծառայությունների տվյալները, ցույց են տալիս, որ 2013–2018 թթ. բնակչության մեկ շնչի հաշվով բյուջետային ծախսերը Արցախում ՀՀ համապատասխան ցուցանիշներից նկատելիորեն բարձր են եղել (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բնակչության մեկ շնչի հաշվով բյուջետային ծախսերը Հայաստանում և Արցախի Հանրապետությունում 2013–2018 թթ. (ԱՄՆ դոլար)[12]

Տարեթիվ	Հայաստան	Արցախ	Արցախը Հայաստանի նկատմամբ (%)
2013	944	1207	127.8
2014	1011	1326	131.2
2015	1004	1222	121.7
2016	1031	1229	119.2
2017	1069	1323	123.8
2018	1031	1489	144.4

Սակայն, ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, 2020 թվականի 44-օրյա պատերազմը ծանր ազդեցություն ունեցավ տնտեսության վրա: Մինչև 2016 թվականը Արցախի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտե-

[12] Տե՛ս https://d2071andvip0wj.cloudfront.net/255%20Digging%20Out%20of%20Deadlock%20-%20RUSSIAN%20-%20Print.pdf

սությունն էր, իսկ 2017 թ-ից արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելի առաջանցիկ տեմպերով է ավելացել: Այդուհանդերձ, պատերազմի պատճառով մեծ չափով տուժեց հատկապես գյուղատնտեսությունը:

Մինչև 2019 թվականը ԱՀ տնտեսության հիմնական ցուցանիշները դինամիկ աճ ունեին: Բավական է նշել, որ ԱՀ ՀՆԱ-ն 2019 թ-ին 2015 թ. ցուցանիշը գերազանցել էր 63.6%-ով (2010 թ. ցուցանիշը՝ գրեթե 3 անգամ): Համեմատվող ժամանակահատվածում ԱՀ արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է ավելի քան 3 անգամ, գյուղատնտեսական արտադրանքինը՝ 1,1 անգամ: Այսպիսի շոշափելի աճ են ունեցել նաև մյուս հիմնական ցուցանիշները: Մասնավորապես՝ ամբողջ ցանքատարածությունը ավելացել է 35.7%-ով, անասնաբուծության համախառն արտադրանքը՝ 28.4%-ով, մսի արտադրությունը՝ 26,9%-ով, ձվի արտադրությունը՝ 16.2%-ով և հացահատիկի արտադրությունը՝ 24.2%-ով[13]: Սակայն, ինչպես երևում է 2-րդ և 5-րդ աղյուսակների տվյալներից, 2020 թվականի 44-օրյա պատերազմն ուղղակիորեն ծանր ազդեցություն ունեցավ Արցախի տնտեսության և պարենային անվտանգության վրա:

Աղյուսակ 2

Արցախի Հանրապետության տնտեսության հիմնական ցուցանիշների շարժընթացը (2015–2020 թթ.)[14]

	2015	2016	2017	2018	2019	2020
Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով (մլն դրամ)	209345.7	229651.6	272070.8	310252.7	342463.6	270907.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը (մլն դրամ)	53541.3	58999.5	97490.3	125006.1	164999.8	103203.2
Գյուղատնտեսության արտադրանքը (մլն դրամ)	64309.6	68467.6	76168.9	74092.8	70591.5	56472.5
Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների հարաբերակցությունը	1:12	1:1,16	1: 0.78	1: 0,59	1: 0.43	1: 54.7
Շինարարության ծավալը (մլն դրամ)	50145.3	45655.8	47100.1	52504.8	64631.2	50269.3
Առևտրի շրջանառության ծավալը (մլն դրամ)	116343.7	99559.2	114177.7	120878.3	134240.0	92107.4
Արտաքին ապրանքաշրջանառությունը (հազ. ԱՄՆ դոլար)	314557.1	337965.5	444477.3	555058.6	656085.2	417781.5
այդ թվում՝						
արտահանում (հազ. ԱՄՆ դոլար)	62082.2	81106.3	156601.2	202050.8	283011.4	136971.1
ներմուծում (հազ. ԱՄՆ դոլար)	252474.9	256859.2	287876.1	353007.8	373073.8	280810.4

2021 թ. Արցախի Հանրապետության համախառն ներքին արդյունքը շուկայական գներով կազմել է 249354.9 մլն դրամ: ՀՆԱ աճի տեմպը կազմել է

[13] ԱՀ ԱՎԾ, Արցախը թվերով, Ստեփանակերտ, 2021, էջ 50-53:
[14] Տե՛ս նույն տեղը, էջ 9:

87.3 տոկոս, ՀՆԱ ինդեքս-դեֆլյատորը՝ 105.5 տոկոս: ՀՆԱ արձանագրված 12.7 տոկոս անկման շուրջ 9.8 տոկոսային կետը կազմում է արդյունաբերությունը, ներառյալ՝ էներգետիկան, 4.8 տոկոսային կետը՝ գյուղատնտեսությունը, 4.2 տոկոսային կետը՝ առևտուր և ծառայությունները[15]:

Պատերազմի պատճառով հատկապես մեծ չափով տուժեց գյուղատնտեսությունը: Պատերազմն ուղղակի բացասական հետևանք ունի ոչ միայն տվյալ տարվա, այլև հաջորդ տարիների արդյունքային ցուցանիշների վրա, քանի որ մեծ չափերի են հասնում գյուղատնտեսական հողերի, տեխնիկայի և սպասարկող ենթակառուցվածքների կորուստները: Մասնավորապես՝ 2020 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2019 թ. համեմատությամբ նվազել է 20 տոկոսով, ընդ որում, բուսաբուծության ոլորտի համախառն արտադրանքի նվազման տեմպը 2 անգամ բարձր է անասնաբուծության տեմպից (գրաֆիկ 1):

Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներով 2021 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 30310,8 մլն դրամ, ինչը 2020 թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի 54 %-ն է կազմում, իսկ 2019 թ. նկատմամբ նվազել է 2,3 անգամ[16]: Այս պատկերը՝ 2021 թ. ցածր ցուցանիշը, բացատրվում է նրանով, որ արցախյան երկրորդ պատերազմը սկսվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան, երբ հանրապետության ամբողջ տարածքում հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքը գրեթե ավարտված էր, արդյունքների վիճակագրությունը՝ հաստատագրված: Այսինքն՝ գյուղատնտեսական տարվա ամբողջական արդյունքներից բացակայում էին պատերազմի հետևանքով կորցրած տարածքների անասնաբուծության և մինչև տարեվերջ հաջորդ տարվա բերքին առնչվող ծախսերի տվյալները:



Գծապատկեր 1. ***Գյուղատնտեսական արտադրանքի ծավալները ըստ ոլորտների, 2010–2020 թթ.***[17]

---

[15] Տե՛ս ԱՀ համախառն ներքին արդյունքը, 2021, վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2022, էջ 4:

[16] Տե՛ս http://stat-nkr.am/hy/component/content/article/758-2017-10-24-13-13-06

[17] Գծապատկերը կազմել են հեղինակները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգրքերի համապատասխան տարիների (2010-2020 թթ.)տվյալներով:

2017–2019 թթ. գյուղատնտեսության ոլորտի համախառն արտադրանքի ծավալների մոտ 40–45%-ն ապահովվել է ներկայումս Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Հադրութի, Քաշաթաղի ու Շահումյանի շրջանների կողմից:

2020 թ. գյուղատնտեսական նշանակության տարածքները նվազել են 82%-ով. 580 000 հեկտարից մնացել է մոտ 105 000 հա, որից հակառակորդի դիտարկման տակ է գտնվում մշակության համար վտանգավոր մոտ 3600 հա տարածք: Արոտավայրերի մասով կորուստը կազմում է 84 %, խոտհարքերի մասով՝ 92%, բազմամյա տնկարկների մասով՝ 65% (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***ԱՀ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 2019 և 2020 թվականներին***[18]

ԱՀ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 44-օրյա պատերազմի հետևանքով ԱՀ-ն կորցրել է իր գյուղատնտեսական տեխնիկայի մոտ կեսը կամ 49.9 %-ը (աղյուսակ 3): Ըստ տեխնիկայի տեսակների՝ այդ կորուստը կազմել է. տրակտորներ՝ 52,4, բեռնատար ավտոմեքենաներ՝ 46.7, հացահատիկահավաք կոմբայններ՝ 55, տրակտորային կցասայլեր՝ 52.7, տրակտորային խոտհնձիչներ՝ 33, հատիկազտիչ մեքենաներ՝ 51, տրակտորային շարքացաններ՝ 52, տրակտորային գութաններ՝ 55, կուլտիվատորներ՝ 45.4 և մամլիչներ՝ 47 տոկոսը:

2019 թ. գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, բացառությամբ արոտների, կազմում էին 214623.1 հա, իսկ տեխնիկայի քանակը՝ 5382 միավոր, այսինքն՝ 100 հա հողատարածքին բաժին էր ընկնում 2.5 միավոր տեխնիկա: 2020 թ. այդ ցուցանիշը կազմում էր 6,7 (գյուղատնտեսական նշանակության հողատարածքները՝ բացառությամբ արոտների ՝ 48958 հա, տեխնիկա ՝ 3302 միավոր):

[18] Գծապատկերը կազմել են հեղինակները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2020 թ. վիճակագրական տարեգրքի (էջ 65) և 2021 թ. ընթացիկ տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական տեխնիկայի քանակի փոփոխությունը 2020–2021 թթ. (միավոր)[19]

Տեխնիկայի տեսակը	Առ 01.10.2020 թ.			Առ 01.10.2021 թ.		
	առկա	որից՝ սարքին	սարքինության մակարդակ (%)	առկա	որից՝ սարքին	2020 թ. համեմատությամբ առկա տեխնիկայի տարբերությունը
Տրակտորներ	1233	1083	87.8	646	529	-587
Բեռնատար մեքենաներ	1484	1263	85.1	791	645	-693
Հացահատիկահավաք կոմբայններ	269	227	84.4	121	85	-148
Կարտոֆիլահավաք կոմբայններ	-	-	-	1	1	+1
Տրակտորային կցասայլեր	366	343	93.7	173	157	-193
Տրակտորային խոտհնձիչներ	161	148	91.9	53	52	-108
Կերահավաք կոմբայններ	3	3	100.0	3	3	0
Հատիկազտիչ մեքենաներ	104	96	92.3	51	45	-53
Տրակտորային շարքացաններ	349	334	95.7	167	154	-182
Տրակտորային գութաններ	818	781	95.5	376	355	-451
Կուլտիվատորներ	403	393	97.5	223	216	-180
Մամլիչներ	117	108	92.3	55	54	-62
Ընդամենը	5307			2660		- 2647(49.9%)

Ներկայումս ԱՀ տնտեսության խնդիրները բազմազան են: Մասնավորապես՝ տեղահանված բնակչությունը հիմնականում կենտրոնանում է մայրաքաղաքում: Գրեթե բոլոր գյուղերը դարձել են սահմանամերձ ու գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասից զրկվել: Փաստորեն, շատ գյուղացիներ զրկվել են նաև իրենց եկամտի հիմնական կամ միակ աղբյուրից:

Նախկինում ԱՀ-ն հացահատիկային մշակաբույսերի մասով ինքնաբավ էր ու բերքի մոտ 25 տոկոսն էլ արտահանում էր Հայաստան: Հիմա, երբ կորսվել է շուրջ 95 հազար հեկտար հացահատիկի ցանքատարածություն և այգիներ, լուրջ հիմնախնդիր է դարձել պարենային անվտանգության ապահովումը:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների 45%-ը գտնվում էր Շահումյանի, Հադրութի ու Քաշաթաղի շրջաններում, որոնք 2019-2020 թթ. ապահովում էին համախառն բերքի 47-50%-ը: Եթե սրան գումարենք նաև Մարտունու, Շուշիի, Ասկերանի ու Մարտակերտի շրջանների համախառն բերքի 1/5-ը, ապա կստացվի, որ համա-

[19] ԱՀ ԱՎԾ, ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-սեպտեմբերին, http://stat-nkr.am/files/publications/2021/Doklad_2021_hunvar_september/Doklad_2021_hunvar_september.pdf

խառն բերքի մոտ 60-65%-ի չափով հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի առաջարկը նվազելու է:

Առավել մեծ խնդիրներ են առաջանալու բոստանային մշակաբույսերի ապահովվածության առումով, քանզի հիմնական մասը մշակվում էր Քաշաթաղի շրջանում: Ցանքատարածությունների 80%-ը կենտրոնացած էր Քաշաթաղի, Հադրութի ու Շահումյանի շրջանում, ինչն ապահովում էր համախառն բերքի 63-67%-ը: Իսկ կարտոֆիլի մասով կորուստը կկազմի ցանքատարածությունների ու համախառն բերքի նվազագույնը 30 %-ը:

Մեծ չափով տուժել են նաև բազմամյա տնկարկների տարածությունները:



Գծապատկեր 3. ***ԱՀ-ում փաստացի մշակվող բազմամյա տնկարկների տարածությունը պատերազմից առաջ և հետո***[20]

Պատերազմի հետևանքով կորսվել է բազմամյա տնկարկների տարածքի կեսից ավելին՝ մոտ 57%-ը: Ընդ որում, հակառակորդին են անցել ձիթենու և խառը պտղատու այգիների տարածություններն ամբողջությամբ, խաղողի այգիների 42%-ը, արևելյան խուրմայի տարածքների 87%-ը, ընկուզավորների 83%-ը: Պատերազմի հետևանքով Արցախը զրկվել է նռան այգիների 68%-ից (որի մոտ 183 հա-ն, այսինքն՝ 17%-ը գտնվում է մշակության համար վտանգավոր գոտում):

Անասնաբուծության ոլորտում ևս ԱՀ-ն պատերազմի հետևանքով մեծ կորուստներ ունեցավ: 2020 թ. հոկտեմբերի մեկի դրությամբ կար 49 549 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որի 63%-ը պատերազմի հետևանքով մնացել է Ադրբեջանի վերահսկողության տարածքներում (որոշ մասն էլ տեղափոխվել է ՀՀ): Կովերի, խոզերի, մանր եղջերավորների ու մեղվաընտանիքների մասով կորուստը կազմել է 60-61%, իսկ թռչուններինը՝ 76%:

[20] Գծապատկերը կազմել են հեղինակները ԱՀ 2021 թ. վիճակագրական տարեգրքի և էկոնոմիկայի նախարարության ընթացիկ տվյալներով:

Աղյուսակ 4

Արցախի Հանրապետության շրջաններում թշնամու տիրապետության տակ մնացած անասնագլխաքանակը[21]

Հ/հ	Շրջան	Անասնատեսակ						
		Խեկ	որից՝ կովեր	Մեկ	Խոզեր	Թռչուն.	Միա-սմբակ.	Մեղվա-ընտ.
1	Ասկերան	2166	1162	1939	2378	21024	199	1196
2	Հադրութ	10076	4655	8455	14098	112882	571	53736
3	Մարտակերտ	446	284	612	573	8350	54	728
4	Մարտունի	2582	912	3188	2691	17147	124	726
5	Շահումյան	886	215	0	79	600	276	962
6	Շուշի	475	182	916	845	9851	93	1199
7	Քաշաթաղ	3288	1624	3517	3525	30005	329	2808
Ընդամենը		19919	9034	18627	24189	199859	1646	61355

Արցախի երկրորդ պատերազմի հետևանքով նկատելիորեն կրճատվել են բնակչության մեկ շնչի հաշվով հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալները (աղյուսակ 5), որը բացասաբար է անդրադարձել պարենային անվտանգության մակարդակի վրա:

Աղյուսակ 5

Բնակչության մեկ շնչի հաշվով հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտադրությունը Արցախի Հանրապետությունում (կգ)[22]

Տարեթվեր	2015	2016	2017	2018	2019	2020
Միս	80.6	88.5	105.0	98.8	102.1	82.6
Կաթ	334.3	335.2	295.6	289.5	297.7	297.6
Ձու	274.9	278.3	272.3	324.7	318.8	261.9
Հացահատիկ	804.4	1014.3	1062.9	937.9	749.1	583.6
Բանջարեղեն	46.3	72.3	98.2	76.9	56.5	36.7
Բոստանային	36.3	39.8	71.0	112.0	75.8	50.2
Կարտոֆիլ	27.6	33.7	36.6	30.4	21.0	14.2
Պտուղ	70.9	53.3	51.4	58.7	71.2	48.2
Խաղող	91.3	20.4	48.8	50.2	53.3	42.3

2021 թ. ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունը հաստատել է բուսաբուծության զարգացման համալիր ծրագիր, որով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների, գարնանացան մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների, ջերմատնային տնտեսությունների և ծխախոտի մշակման տարածքների ավելացման խթանմանն ուղղված միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- տնկիների արժեքի մասնակի սուբսիդավորում.
- գարնանացան մշակաբույսերի սերմերի արժեքի մասնակի սուբսիդավորում.
- բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.
- ջերմատնային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինան-

[21] Աղբյուրը՝ ԱՀ էկոնոմիկայի նախարարության տվյալներ:
[22] Տե՛ս ԱՀ ԱՎԾ, Արցախը թվերով, Ստեփանակերտ, 2021, էջ 53:

սական միջոցների տրամադրում.

- ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.
- կարկտապաշտպան ցանցերի տեղադրման դեպքում անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում:

Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար 2021 թ. պետական բյուջեից հատկացվել է 1 096 650 000 դրամ[23]:

Ծրագրերի մեծ մասը գործում էր նաև վերջին երկու տարիներին, իսկ հետպատերազմյան շրջանում դրանց պայմանները բարելավվել են:

Օրինակ՝ ջերմատնային տնտեսությամբ զբաղվողների համար ջեռուցվող ջերմատների կառուցման նպատակով 1 քառակուսի մետր հողատարածքի դիմաց տրամադրվող գումարը կրկնապատկվել է՝ դառնալով 600 դրամ[24]:

Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրով ավելի բարենպաստ պայմաններ են առաջարկվում. գարնանացան մշակաբույսերի սերմերն անվճար տրամադրվում են պետության կողմից՝ նախկինում 70 տոկոս սուբսիդավորման փոխարեն, իսկ նորատունկ այգիների մակերեսի ընդլայնումը խթանելու նպատակով (ծրագրի պայմաններին համապատասխանելու դեպքում) փոխհատուցվում են տնկիների արժեքները՝ 1 տնկիի դիմաց առավելագույնը 1000 դրամի չափով:

Պտղաբուծության զարգացումը խթանելու նպատակով նռան, խաղողի, ընկուզենու, ազնվամորու և այլ պտղատու և հատապտղատու այգիների 1 հեկտարի հիմնադրման համար նախատեսվում է մասնակի փոխհատուցում՝ ավանդական եղանակով մշակության պարագայում 100 հազարից մինչև 1 մլն դրամի և ինտենսիվ եղանակով մշակության պարագայում 150 հազարից մինչև 2 մլն դրամի սահմաններում:

Ոռոգման ոլորտում ևս նախատեսվում է իրականացնել պետական աջակցության ծրագրեր: Մասնավորապես՝ մինչև 3 տարեկան բազմամյա տնկարկների համար, ինչպես նաև ծխախոտի ցանքերում ոռոգման արդի համակարգերի տեղադրման դեպքում էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունն առաջարկում է համակարգերի արժեքի 75 տոկոսի չափով անհատույց միջոցների տրամադրում: Անձրևացման շարժական և ստացիոնար համակարգերի ձեռքբերման համար առաջարկվում է համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց աջակցություն:

Անասնաբուծության ոլորտը զարգացնելու համար նույնպես նախատեսվում են սուբսիդավորման ճկուն մեխանիզմներ: Մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռքբերման դեպքում տրամադրվում է դրանց արժեքի 50 տոկոսի չափով սուբսիդավորում, անասնաշենքերի էլեկտրաֆիկացման և ջրաֆիկացման ծրագրի շրջանակում՝ ծախսերի 90 տոկոսի սուբսիդավորում:

Անասնաբուծական մթերքի և հումքի վերամշակման արտադրամասերի կառուցման ծրագրով նախատեսվում է արժեքի 50 տոկոսի չափով փոխհատուցում կամ անտոկոս վարկի տրամադրում:

Անասնաշենքերի կառուցման ծրագրով կիրականացվի ծախսերի 50 տո-

---

[23] Տե՛ս ԱՀ Կառավարության 2021 թ. մարտի 15-ի N 220-Ն որոշում, աղյուսակ N 6:

[24] Տե՛ս նույն տեղը, 18.1:

կոսի չափով փոխհատուցում կամ անտոկոս վարկի տրամադրում, անասնաշենքերի վերակառուցման և վերանորոգման ծրագրով՝ ծախսերի արժեքի 30 տոկոսի չափով փոխհատուցում կամ անտոկոս վարկի տրամադրում:

Սպանդանոցների կառուցման ծրագրով ևս նախատեսվում է ծախսերի 50 տոկոսի չափով փոխհատուցում կամ անտոկոս վարկի տրամադրում:

Վերոհիշյալ ծրագրերի արտոնյալ պայմաններով վարկավորումն ակնկալվող արդյունք կարող է ապահովել միայն հիմնավոր բիզնես պլանի առկայության և նորամուծական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում: Արցախցիների մտավոր կարողությունները տեխնոլոգիական առաջընթացի իրական նախապայման են, որոնց իրացման համար անհրաժեշտ են գործուն կառուցակարգեր: Օրինակ՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ընկերություններում կա մի համակարգ, որը կոչվում է «նորարարական ստարտափ՝ կազմակերպության ներսում»: Եթե ստորաբաժանման աշխատակիցներից որևէ մեկը գաղափար ունի, որով կարելի է ստեղծել նոր արտադրական տեխնոլոգիաներ կամ նոր տեսակի արտադրանք, ապա ձևավորվում է հանձնաժողով, որի դրական որոշումը հանգեցնում է նախագծի ֆինանսավորմանը և նախաձեռնողի մասնակցությամբ թիմի ստեղծմանը: Հաջող արդյունքի դեպքում գյուղատնտեսական կազմակերպության ներսում ստեղծվում է նորարարական լուծումների շարունակական զարգացման միջավայր, որը նպաստում է արտադրական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Եզրակացություններ

1. ԱՀ Կառավարությունը գյուղատնտեսության վերականգման որոշակի քայլեր ձեռնարկել է, սակայն նպատակամետ ձևով պետք է շեշտադրել առկա գյուղատնտեսական ներուժի արդյունավետ ու նորամուծական զարգացման առաջնահերթությունը: Ագրոպարենային համալիրի համակարգված գործունեությունը պահանջում է նաև ագրոծառայությունների, ագրովերամշակման ու լոգիստիկ համակարգերի համաչափ զարգացում: Ուստի Արցախի ագրոպարենային ոլորտի վերականգնումը և զարգացումը պետք է իրականացնել տնտեսական, տեխնոլոգիական, տեխնիկական և սոցիալական բաղադրիչների միասնական ու համամասնական զարգացման մոդելով:

2. Հողային պաշարների, անասնագլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների կորուստները մեծ են և որոշ իմաստով՝ անդառնալի: Անգամ ԱՀ ենթակայությամբ գտնվող ցանքատարածությունների և այգիների մի զգալի մասի մշակությունը դժվարանում է անվտանգության տեսանկյունից: Հետևաբար՝ ներկայիս կարգավիճակով բավարար չէ ռուս խաղաղապահների ներկայությունը, որոնք միշտ չէ, որ գտնվում են անհրաժեշտ տեղում և ժամանակին: Նպատակահարմար է առավել վտանգավոր տարածքներում գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել միասնաբար և տեղի ու աշխատանքային ժամերի մասին տեղյակ պահել ռուս խաղաղապահներին:

3. Դարձյալ անվտանգության նկատառումներով՝ նկատելիորեն դժվարացել է անասունների արոտային պահվածքի կազմակերպումը: Ուստի նախապատվությունը հնարավորինս պետք է տալ մսուրային պահվածքին, որը ինտենսիվ անասնապահության զարգացման նախապայման կարող է հանդիսանալ: Այս խնդրի լուծմանը պետք է նպատակաուղղել պետական աջակցության համապատասխան ծրագրերը:

4. ԱՀ ագրոպարենային համալիրի վերականգնման և զարգացման մայրուղին «դաշտից մինչև սեղան» արժեշղթայում նորամուծական տեխնոլոգիաների և աշխատանքի գիտական կազմակերպման սկզբունքների ներդրումն է: Այդ նպատակով, տեխնիկական զինվածությունից բացի, կարևոր է մարդկային կապիտալի, արդիական գիտական, տեղեկատվական և խորհրդատվական համակարգերի զարգացումը:

5. Կարևորվում է ԱՀ պարենային ապահովության և անվտանգության մակարդակի բարձրացումը: Ագրոպարենային ոլորտում վերջին տարիներին իրականացված մի շարք ծրագրերի արդյունքում 2019 թ. որոշ պարենամթերքների մասով ինքնաբավության մակարդակը որոշակիորեն բարձրացել է (բուսական յուղ, ձու, տավարի միս, խոզի միս, թռչնամիս), իսկ ցորենի ինքնաբավության մակարդակը գերազանցում էր 100 տոկոսի շեմը (2018 թվականին կազմել է 133,1 տոկոս՝ 2014 թվականի 91,7 տոկոսի դիմաց): Այնուհանդերձ, հիմնական պարենամթերքի մասով դեռևս չէր հաջողվել հասնել բացարձակ ինքնաբավության, իսկ որոշ մթերքների, օրինակ՝ կարտոֆիլի, բանջարեղենի, հատիկաընդեղենի մասով հանրապետությունում առկա է միջին կամ միջինից բարձր ինքնաբավության մակարդակ: Հետպատերազմյան շրջանում պարենային ապահովության և անվտանգության հիմնախնդիրները բավականին սրվել են:

6. Գյուղմթերքների իրացման կայուն համակարգի ստեղծումը բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի ծավալների ավելացման կարևոր նախապայման է: Այս տեսակետից ընդգծվում են հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների ստեղծումը և փոխշահավետ համագործակցության զարգացումը, արտադրանքի իրացման գործառույթների ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը:

7. Անասնապահության զարգացման համար առաջնահերթ կարևորություն ունեն.

7.1. բարձր մթերատու հատկանիշներ ունեցող կաթնատու և մսատու գյուղատնտեսական տոհմային կենդանիների ներկրման միջոցով տեղական ցեղերի բարելավումը,

7.2. անասնաբուծության վարման արդյունավետ համակարգերի ներդրումը,

7.3. անասնագլխաքանակի հաշվառման, համարակալման և տեղեկատվական համակարգի ձևավորման հիման վրա տոհմային գործի կատարելագործումը,

7.4. ոլորտի պետական աջակցության ծրագրերի հասցեական իրականացումը:

8. Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար բարելավված ֆինանսական ծառայությունների հասանելիությունը ոլորտի մրցունակության հիմնական շարժիչ ուժերից մեկն է: Գյուղատնտեսության վարկավորման գործընթացում կարևորվում է գրավադրման մեխանիզմների բարելավումը, մասնավորապես՝ մատչելի տոկոսադրույքի և վարկավորման ժամկետների ապահովումը, պետական երաշխիքների տրամադրումը:

Օգտագործված գրականություն

1. ԱՀ ԱՎԾ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-սեպտեմբերին:
2. ԱՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021 (վիճակագրական-վերլուծական զեկույց), Ստեփանակերտ, 2022:
3. ԱՀ համախառն ներքին արդյունքը, 2021, վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, 2022:
4. ԱՀ վիճակագրական տարեգիրք, 2020:
5. Արցախը թվերով, 2021 թվական, Ստեփանակերտ, 2021:
6. Փախլյանի Ա., Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ, ՀՊՏՀ, «Ամբերդ» տեղեկագիր, N 6, 2020:
7. Հայրիյան Ե., Արցախի հանրապետության տնտեսության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները, «Գիտական Արցախ», N 1, 2021:
8. Բարսեղյան Լ., Ծատուրյան Ա., Ասկերանի շրջանի սոցիալ-տնտեսական վերլուծությունը, «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, 2018:
9. Koizumi Kenkichiro, In Search of 'Wakon': The Cultural Dynamics of the Rise of Manufacturing Technology in Postwar Japan. Technology and Culture, 2002.
10. Муханов В., Скаков А., Нагорный Карабах – 2020: последствия войны и перспективы поствоенного урегулирования // Мировая экономика и международные отношения, том 65, выпуск №6.
11. Родина Т. Е., Методика оценки экономической эффективности сельского хозяйства на региональном уровне / Т. Е. Родина, Е. Е. Адельгейм /. Международный научно-исследовательский журнал, № 9 (99), часть 1, 2020.
12. Аветисян С., Послевоенные проблемы развития аграрного сектора Республики Арцах, «Амберд» бюллетень, N 5, 2021.
13. https://d2071andvip0wj.cloudfront.net/255%20Digging%20Out%20of%20Deadlock%20-%20RUSSIAN%20-%20Print.pdf
14. http://theanalyticon.com/?p=607

САМВЕЛ АВЕТИСЯН

Старший эксперт исследовательского центра АГЭУ «Амберд», доктор экономических наук, профессор

МАРИАННА ХАЧАТРЯН

Преподаватель Арцахского государственного университета, аспирант АГЭУ

Послевоенное состояние и программы государственной поддержки агропродовольственной системы Республики Арцах.- Основной отраслью экономики Республики Арцах является сельское хозяйство, которое вместе с пищевой промышленностью образует агропродовольственную систему. До 27 сентября 2020 года, т.е. до начала 44-дневной войны, агропродовольственная система республики отличалась высокими темпами развития и современным подходом к внедрению передовых технологий. Однако, в результате войны, система понесла большие потери, восстановление и даль-

нейшее развитие которых представляет собой трудный, но неизбежный процесс.

Целью данного исследования является оценка потерь агропродовольственной системы Республики Арцах, выявление возникающих проблем и представление предложений по их решению. В частности, подчеркнуты возможности эффективного использования ограниченного производственного потенциала за счет инновационных технологий и обеспечения продовольственной независимости страны. Особо подчеркивается необходимость специализации сельскохозяйственного производства, интеграции с агроперерабатывающим сектором и развития кооперации.

Ключевые слова: *аграрная, продовольственная безопасность, землепользование, занятость, государственная поддержка, переработка, программы*
JEL: Q10, Q20
DOI: 10.52174/1829-0280_2022.3-95

SAMVEL AVETISYAN
Senior Expert at ASUE «Amberd» Research Center,
Doctor of Economics, Professor

MARIANNA KHACHATRYAN
Lecturer at Artsakh State University,
PhD Student at ASUE

Losses of Agri-Food System Resulting from the War and State Assistance Programs in the Republic of Artsakh.- The main branch of the economy of the Republic of Artsakh is agriculture, which, together with the food industry, forms the agri-food system. Until September 27, 2020, i.e. the beginning of the 44-day war, the agri-food system of the republic was distinguished by high rates of development and a modern approach to the introduction of advanced technologies. However, as a result of the war, the system suffered heavy losses, the restoration and further development of which is a difficult but an inevitable process.

The purpose of this study is to assess the losses of the agri-food system of the Republic of Artsakh, identify emerging problems and present proposals for their solution. In particular, the possibilities of effective use of limited production potential through innovative technologies and ensuring the food independence of the country were emphasized. The need for specialization of agricultural production, integration with the agro-processing sector and the development of cooperation is especially emphasized.

Keywords: *agrarian, food security, land use, employment, state support, processing, programs*
JEL: Q10, Q20
DOI: 10.52174/1829-0280_2022.3-95